

արգելուի, պարտ կը համարին յայտ-
նել թէ այնպիսի վիճակ մը չկրնար
իրենց և առհասարակ խրոչիոյ շա-
հուն հետ համաձայնիլը Այսպիսի պա-
րագայի մը մէջ իրենց կը վերապա-
հեն միաբանութեամբ որոշել այն
միջոցները՝ զորս քրիստոնեայ ժողո-
վըրդոյ բարեկեցութիւնն և ընդ-
հանուր խաղաղութեան շահերն ա-
պահովելու յարմարագոյն համարինն»
(Պարագրաֆ 10-ին)

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 10 ապրիլ.
Պ. Լէյքըտ երկուշաբթի նաւ պիտի
նստի Մարտիայէն:
Իրլանտայի Լայմփը քաղաքին մէջ դո-
րականք և ժողովուրդը կուռեցան իրարու
հետ, բայց վերջը խաղաղութիւնը վերա-
հաստատեցաւ:

Վիեննա 10 ապրիլ.
Խաղաղութիւնը պահելու յոյսերը բո-
ւրովին չեն կորսուած:

Փարիզ 11 ապրիլ.
Վաճան էֆէնտին երէկ մեկնեցաւ Ի-
կ. Պոլսոյ:

Պէրլին 11 ապրիլ.
Կայսերական հրամանագիր մը մինչև
օգոստոս հրաժեշտ կը չորհէ Պ. Պիտեր-
քի, իրաւունք վերապահելով իրեն նոյն
միջոցին խորհուրդ հարցնել Պ. Պիտերքի:

Լոնտոն 11 ապրիլ

Օսմ. քօնա.	10 13/16
Փոխ.	1863 12 3/4
»	1869 11 7/8
»	1871 27 1/2
»	1872 20
»	1873 11
» Եղիպտ.	49 1/8
Անգլ. քօնա.	96

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Նիս 26 ֆարի 1877

Ժամ 5 ին ատեն բացուելով,
20 ի չափ երեսփոխանք՝ որք գաւառ-
ներէն նոր եկած էին, երգում ընե-
լու հրաւիրեցան:

Յետոյ նախորդ նստին ատենագ-
րութիւնը կարգացուեցաւ, և ըն-
դունուելէ ետև, Մարտիան
վստմ. Սեպտէ Էֆէնտին՝ գաւառա-
ւոր վարչութեան վերաբերեալ կա-
նոնադրութեան երկրորդ ընթեր-
ցումն սկսաւ: Երբոր կարգն Գրդ-
յօրուածին եկաւ, որ գաւառաց
վարչական ժողովներուն անդամոյ
կէսը իսլամ և կէսն ալ աչ իսլամ ըլ-
լալ կը տրամադրէ, Յոյն երեսփո-
խաններէն մասնք բողոքեցին այդ-
իւրեք և ալ իւրեք բողոքեցին դէմ
իրեն հակառակ Սահմանադրու-
թեան, որ այդ խտրութիւնը վեր-
ցնելով՝ արտութեան բոլոր հպա-
տակներն հաւասարապէս Օսմանցի
կանոններէն:

Այս առարկութեան դէմ ելան
Հայ երեսփոխանք, որոց հետ միա-
ցան նաև իսլամ երեսփոխանաց մեծ
մասն յայտարարելով թէ Օսմանցի
անունը տէրութեան այլ և այլ կրօն-
քէ և զեղէ ժողովրդաց իրարմէ գա-
նադանիչ յատուկ անուաները չկան,
և թէ վարչական ժողովոյ կողմա-
թեան մէջ իսլամ և աչ իսլամ անգա-
մաց թիւն որոշող տրամադրութիւնն
եթէ վերնայ, այն ժամանակ տէրու-
թեան գաւառաց ամենամեծ մասին՝
մանաւանդ Անատոլիոյ մէջ, ուր իս-
լամ ժողովուրդք մեծամասնութիւն
կրկազմեն, ժողովոյ անգամները մի
միայն իսլամներէ կը նստուին, և ա-
սովմեծ զրկանք կը լըլըլ քրիստոնէից
(գլխաւորապէս Հայոց):

Երբոր խնդիրը քուէի գրուելու
վրայ էր, երեսփոխան Նաքաշ Էֆէն-
տին առաջարկութեամբ որոշուեցաւ
բացատրութիւն խնդրէրներքին գոր-
ծոց նախարար Ճէփոէթ փաշայէն:
Նորին վստմութիւնն ալ խոստացաւ
պէտք եղած բացատրութիւնները
բերել յաջորդ նստին:

Անոր վրայ կանոնադրութեան ըն-
թերցումը շարունակեց մինչև 19 ըդ-
յօրուածը, և ժամ 7 ին հրապարա-
կային նիստը դրոշմեցաւ:

Իր լոնք թէ Օսմանեան երես-
փոխանական ժողովոյ երեքշաբթի
առաւր զանգուակ նստին մէջ Գարա-
տաղի խնդրոյն վրայ եղած վիճաբա-
նութեան առթիւ Հայէպի երեսփո-
խան Նաֆի Էֆէնտին հարցուցեր է
արտաքին գործոց նախարար Ստֆ-
վէթ փաշային թէ Գարատաղի հետ
թշնամութեանց վերաբերեալ սկսիլը
Ռուսիոյ հետ ալ պատերազմի բռն-
նուելու պատճառ պիտի ըլլայ: Նո-
րին վստմութիւնն ալ պատասխանե-
ր է, թէ իսլամ հաւանական է, և ա-
ղապէր է ժողովին որ լաւ խորհի այն
ամեն վտանգներն որ Ռուսիոյ հետ
պատերազմը կրնայ յառաջ բերել
երկրին ներկայ երմտական նեղ վի-
ճակին մէջ:

Ժողովը 18 ի դէմ 75 ձայնով պա-
տասխանեց է թէ երկրորդ պէտք չէ
բնաւ վարանի այդ մեծ պատերազ-
մին պահանջած զօհոյթութեանց առ-
ջնաւ:

Լէվրթ Հէրըլտի խօսքին նայե-
լով Տրինայի կղզեաց պատճառաւ
Սերվիոյ հետ ծագած դժուարու-
թիւնները լուծուելով, Թուրք զոր-
քերը քաջուեր են յիշեալ կղզիներէն:

Կայսերական հրամանաւ՝
Հեռագրաց և լիցիտատութեանց
վերատեսչի նախկին օգնական իզդէթ
Էֆէնտին՝ նոյն կրկին պաշտօնատանց
վերատեսչու անուանեցաւ փոխանակ
թընկեր Եափէր փաշային:

Հասարակաց կրթութեան նախա-
րար Միւնիֆ Էֆէնտին շաբաթ օրը
Կ. Պոլսոյ հասնելով, կիրակի օրը վեհ-
Սոյլթանին ներկայանալու պատիւ
ունեցաւ:

Քէմալ պէյի դատը Կ. Պոլսոյ ե-
ղեւնադատ ատենին յանձնուած ըլ-
լալով, Քէմալ պէյ երեքշաբթի օրն
երկրորդ անգամ ներկայացաւ յիշ-
եալ ատենին:

Վազրթ լրագիրը պատերազմա-
կան գործոց նախարարութեան պիւտ-
ճէին վրայ անհաճօ ակնարկութիւն-
ներ ըրած ըլլալով, պատերազմական
գործոց նախարարութիւնը դատ բա-
ցաւ յիշեալ լրագրին դէմ:

Յունական թրաքի լրագիրն ալ
Յոյն աղկիւն մը պարտուց համար
բանտարկուելուն և յետոյ իսլամութե-
ան գաւառներն առթիւ սխալ տե-
ղեկութեանց վրայ հիմնեալ կծու
քննադատութիւններ հրատարակած
ըլլալով, նոյնպէս դատի ենթարկե-
ցաւ:

Երեքշաբթի զիշեր մայրաքա-
ղաքին մէջ Ֆէնէրի թաղը հրդեհ
պատահելով, հողին ուժգնութեան
պատճառաւ անմիջապէս ծաւալեցաւ,
և չորս-հինգ ժամ տևելով 150 ի չափ
տուն և խանութ մսկի դարձաւ:

Կըսուի թէ չորս հինգ ջրանկիրք
պատի մը փռատակներուն ներքե
մնալով կեանքերին կորուսեց են:

Բէրլէնի պազարը Ֆրանքինի
խանը նստող և ապէք քանի մ'ամիս
առաջ ան յայտ եղող Արալիւրտ անուն
Յոյն սեղանատարին սպաննուած ըլլալը
ստիկանութեան փութաձան հետա-
խուզութեանց չնորհիւ երևան եկաւ:
Ահաբործներէն մին նոյն իսկ Ֆրան-
քինի խանից հայ սեներկապեան է ե-
ղեր, որ թաղին թուրք զիշերապա-
հին և օտիշ թուրք մ'և իւր եղբւ-
րը գործակցութեամբ յիշեալ խա-
լային սպաններ և քովը գտնուած
2000 լիրայի մօտ ստակը կողորպե-
ր են:

Ոճրագործաց խոստովանութեան
վրայ՝ սպաննելոյն գիւտն ալ Բամն-
տօ խանին սանդուղներուն ներքե էն
գտնուեցաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՕՆԱՍՏՈՒՄՈՒՄԻԷ

30 մարտ, չորեքշաբթի իրիւն	12, 17
31 մարտ, հինգշաբթի առաւօտ	
բացուեցաւ	12, 13
ժամ 5 ին	12, 10
Բուռն իրիւն երկաթուղեաց	Ֆր. 32
Թղթագրամ	Լր. 160 30

ԸՆԹԱՑԻ ԱՐՄԱՆՈՒԹՈՅ			
Կ. Պոլսոյ 30 Մարտ			
Ստիլթէ Էֆէնտին բաժ.	Անգլ. Լր.	3,	8
» փոխանական	»	2, 11	
Կ. Պոլսոյ Պաշտօն	»	3, 13	
Քրէյտի Ժէնէրալ	»	2, 50	
Քրէյտի Օսթրո-Թուրք	»	—	
Փոխ.	1863	Ֆր.	66
»	1865	»	67
»	1869	»	60
»	1872	»	20
»	1873	»	58
Թրամուայ	Օսմ. Լր.	4	55

ԸՆԹԱՑԻ ԴՐԱՄՈՅ			
30 Մարտ			
Անգլ. Լր.	Մը.	109	36
Նորթոն Բոկի	»	87	27
Իմփոկալ Ռուս	»	89	10
Գլըբփոյ	»	51	20
Հինգ ֆրանք	»	—	
Հինգնոց	»	113	30
Պղինձ	»	160	30

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Հետեւեալ նամակներուն մէջ պատ-
մաւած ստեղծի ոճրագործութիւն-
ները կայսերական կառավարութեան
ուշադրութեանը ներկայացնելով՝ կը
յուսանք իրաւամբ որ անպատիւ չեն
մնար, և ապագային մէջ չնորոգուե-
լու համար ալ աղբու միջոցներ ձեռք
կառնուին: Ըստ մեր կարծեաց, այս
տեսակ յանդուգն խժեթութեանց
առաջն առնելու ամենէն զօրեղ մի-
ջոցն է՝ տեղական իշխանութիւններն
ալ պատասխանատու բռնելով պատ-
մել իւրեք անգամ և հետեւ արար իւ-
րե անհատատարիմ իրենց պաշտօնա-
կան պարտականութեանց օրով հե-
տեւ շատ անգամ անոնց անհոգու-
թեան երեսն է որ գաւառաց մէջ
այս տեսակ անկարգութիւնները շա-
րունակելով, տէրութեան թշնամի-
ներուն ալ առիթ կուտան ամեն չա-
րախօսութիւն կուտակելու կայսերա-
կան կառավարութեան դէմ և Եւրո-
պիոյ հասարակաց կարծիքը Թուրքիոյ
դէմ գրգռելու:

Կ. Պոլսոյ 24 մարտ, 1877
... Խմբագիր.

Այսոր նամակ մը առի Կէմալէքէն և
անոր մէջ կարգացի ոճրագործութիւն մը
որ եօթն կամ ութ տարիներէ հետեւ հա-
տարակ բան մ'եղած է յիշեալ զիշերն
մէջ:

Կէմալէք Արաւստիոյ կուսակալութեան
ներքե և Սեբաստիայի զէպ արևմտա-
լիր 18 ժամ, իսկ Անտարկիայի զէպ ա-
րևելք իւր 12 ժամ հետի զիշեր մ'է, և
ունի իւր 500 տուն Հայ, և 200 տուն
մահմեդական բնակիչ: Այս զիշերն մէջ
1870 թուականէն ի վեր վեց կամ եօթն
Հայ աղկիւններ մահմեդականացուած են
այլ և այլ միջոցներով, որ բողոքովին հա-
կառակ են կառավարութեան օրինաց և
կրօնական սպառնութեան: Քանի մը տա-
րի առաջ ձեռ թիւրքին և ուրիշ լրագրաց
մէջ հրատարակուեցան այս բռնի կրօնա-
փոխութիւններն մէկ քանիները, մանա-
ւանդ աղկիւն մը սպառնութիւնն, որոյ
հայրն իւր կամօք մահմեդական կրօնն
ընդունած էր, և անորը ներգրութիւն և
տանջանք կուտար իր աղկիւն ալ որպէս
զի ընդունէր իր հորը նոր կրօնը: Խեղճ
աղկիւնն այս դարաւարտող հոր ձեռքէն
զրկելէ մարտիրոսի մը նման տանջուելն
եղան, ինչպէս այն մեղեւանող Խմբին
ձեռքն որուն խօսքը պիտի ըլլայ այս նա-
մակիս մէջ:

Թողունք անցեալն և ներկայ զէպը
պատմել սկսիմք:
Բարեկամս այսպէս կը գրէ ինձ փետր-
26 թուականաւ:

«Առաջին նամակաւս կը փախաքէի
ձեզ ուրախութիւն լուրեր հաղորդել մեր
զիւղին վրայ, սակայն ստիպուած եմ ցա-
ւալի լուրեր տալ ձեզ, և նորոգել ձեռ
մտքին մէջ այն զէպերուն յիշատակն,
որ կարելի էր յաճած են ձեռ և ամենուս
սրտերը:

«Մեր զիւղին բնակիչներէն Գալայճեան
Պետրոսի դուստրը՝ Վիլիսթան՝ բաւա-
կան առեւնէ ի վեր նշանուած էր Քիւ-
չիքեան Խաչատուրի որդւոյն Սարգսի
հետ: Այժմ Օսման օղլու Խամայիլ, որ,
ինչպէս գիտէք, իր աւագակութեան և
սրկայութեան կողմանէ նշանաւոր հան-
դիսացած է այս կողմերը, այլ և այլ ա-
սորիներու միջոցներ զործածած է Վի-
լիսթանը մահմեդական ընելու և անոր
հետ ամուսնանալու: Բայց տեսնելով որ
այն միջոցները չեն յաջողիր, դու ձեռ
թեղով աղկիւն առանձին տեղ մը բերել

կուտայ՝ աղկիւն դրացի և հասակակից
մահմեդական աղկիւնց միջոցաւ: Խամա-
յիլ իր հետն առնելով Վանի Օղլու Խորա-
հիմը կերթայ այն տեղ, ուր յիշեալ մահ-
մեդական աղկիւնը խաբելով տարած է-
ին խեղճ Վիլիսթանը: Հոն Խամայիլ այս
երեքտանտանուայ կուսին վրայ իր վարդա-
կիւրքը յաղեցնելէ ետքը կ'սպաննայ ըս-
պաննել զանի, եթէ չհաւանի իր հետը
փախչելով ամուսնանալ: Խեղճ աղկիւնը
լալով և ողբալով, նաև քանի մը օրէն
անոր քովը դառնալու խօսք տալով, հա-
զիւ կը յաջողի դազանաւարտը Խամայիլին
ձեռքէն այն օրն ազատիլ:

«Աղկիւն տունը դառնալէն ետքը կը
պատմէ մօրը թէ ինչ փորձանք եկաւ
զիւղին: Աղկիւն ծնողքը վախճալով թէ
Խամայիլ իր սպառնալիքը կատարելու համ-
արձակ է և յանդուգն է, անմիջապէս
կրկնեցին իրենց փեսացու Սարգիսին որ
չուտով հարսնէք ընէ, և աղկիւնն այս
կերպով ապառուի բռնաւորին ձեռքէն:
Երիտասարդը շատ աղքատ ըլլալով՝ վեր-
ջին տաղանդն ներգրութիւն կը քաշէ հարս-
նիք ընելու, սակայն Վիլիսթանին հօրեղ-
բորորդիներէն Միսաս ապա Գալայճեան
կը հաճի հարսանեաց ծախքը վճարել, և
հարսնէքը կը կատարուի:

«Խամայիլ տեսնելով թէ չյաջողեցաւ
աղկիւն իրեն կին առնուլ, կը կատարի
և կը խորհի աղկիւն և անոր ամուսինը մի-
անգամայն սպաննել: Վերջապէս աղկիւն
հարս ըլլալէն տասն և ինն օր ետքը, շա-
բաթ զիշեր մը, փոթորիկէն և աղջամուղ-
ջէն օղուտ քաղելով և հետն ուրիշ երեք
օրնալաններ ալ առնելով կը մտնէ Քիւ-
չիքեան Խաչատուրի տունն և երեք
շաբթեան հարսին Վիլիսթանին գլուխը
կը կտրէ և Սարգիսը ծանր կերպով կը
վերաւորէ երկու տեղէն, երբ անոնք
քուէի մէջ էին: Սարգիսն աղիւնները
դուրս թափելով կըստի աղաղակելու Խեղճ
երիտասարդին հայրը զիւղը չէր, մայրը
կարթննայ: Նոյնպէս գրայցիներն ալ ար-
թընալով օղուութեան կը զիւղեն, բայց
մարդասպանները խոյս կուտան:

«Հետեւեալ օրն այս ոճրագործութիւնը
Շարգըլայի գալմաղամին իմաց տալու
համար զիւղէն հոն մարդ զրկուեցաւ:
Կառավարութեան կողմէն դատաւորն
Տէմալիի ժողովոյ անդամներէն անձ մը
նաև զարգիր մը զիւղն եկան քննութեան
համար, և Խամայիլն ու Խորահիմը բռն-
նելով Շարգըլայ տարին հարցաքննելու:
Ոճրագործները քանիցս հարցաքննուեցան,
բայց ուրացութեամբ միայն պատասխան
տուին իրենց ուղղեալ հարցմանց:

«Գալմաղամը ոճրագործները Սեբաս-
տիա զրկեց, որպէս զի հարցաքննութիւ-
նը հոն շարունակուի: Տեսնելը ինչ ելք
կուենայ: Սարգիսն վերքերն, ինչպէս
ըսի, վտանգաւոր են: Բժիշկ Մարգար
տղան, որ իր ճարտարութեամբը նշանա-
ւոր եղած է այս կողմերը, կը դարմանէ
յիշեալ երիտասարդը: Վտանգը բաւա-
կան թեթեւացած է, բայց զեռ հիւանդին
կեանքն կը վախճուի:

«Մտերս աւագակները շատցած էին,
և ամեն մարդ մեծ վախով մէջ էր: Եր-
բոր այս ոճիւն ալ գործուեցաւ, զիւղին
Հայերը բողոքովին սարսափի մէջ ինչպէս
և հիմա զիւղի գերեկ իրենց քովին գէնք
չեն պակսեցներ: Գիւղին իմամ Համի-
թի նոյն հետեւեալ սպառնալիքն ըրած է
մեզ բախելով թէ՝ «Եթէ դուք այս ոճիւրը
չծածէք և ոճրագործները փոխէք,
պիտի սպանէք զմեզ ձեռ ամենուս արիւ-
նը թափելու»: Երբ իմամ մը այսպէս խօ-
սի, ալ կրնաք երեսակայել թէ անմիկ
ժողովուրդը, մանաւանդ զիւղի բնաւա-
ւորներն ալ ինչեւր չեն խորհիր և գոր-
ծեր:»

Այս սարգ սպառնութիւնը բաւական
է նկարագրելու թէ Կէմալէք խեղճ Հա-
յերն ինչ թշուառ վիճակի մէջ են, և
ինչպիսի դրացութիւն կը վայելեն իրենց
հայրենակից Թուրքերէն:

Տէր խորագրաւոր, կը խնդրեմ որ
դուք ալ այս մասին ձեռ աղղու գիտու-
ղութիւնն ընելով, հաճիք կառավարու-
թեան և Պատրիարքարանի ուղարկութեա-
նը հրաւիրել այս զէպերն վրայ, որ Կէ-
մալէքի համար առաջին չէ, և կը վախ-
նամ որ վերջինն ալ պիտի չըլլայ, եթէ
ոճրագործներն ըստ արժանեոյն չպատ-
ժուին:

Ընդունեցէք յարգանացս հաւատարմը
... .

... Խմբագրաւոր Մասիս պատուա-
կան լրագրոյ:

Մինչ այլոց ազգաց աղիւթն և բնա-
ծիր եսանդն վտանգ և բողոքողը բնու-
թեան չքնաղ տեսարաններն և բախտին
չքնաղայլ յաջողածներն եղած են,
որով իրենց զրկելներն հոգեւորաւ անգոր-
քան դաճման բնութեան վրայաց և զիւ-
ցաղներով թեանց երեսակերպեալ հազ-
նեղութիւններ և մասնաւոր ուրուպիւծ-
ներ նկարագրած և գեղեցիկ են:

Ներհակ այսմ՝ Հոյու արիւնը տարցու-

Գ. Ռ. ՍՈՒՍՆ